ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ
«ՁԱՆԳԱԿ» ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Հ.Հ. Ք.ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
Քոչարի փող.շինություն թիվ 15

Ելից N 08
13 փետրվարի 2023թ.

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԵՎՈՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ձանգակ» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ընթացակարգով՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու, անհատ ձեռնարկատեր Լևոն Սիմոնյանի հետ՝2023 թվականի հունվարի 13-ին կնքել է Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ձանգակ» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի մատակարարման թիվ «ՉՀ-ՁՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2023/2-3» պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր): Հետագայում, ֆինանսական միջոցների հատկացումից հետո, 2023 թվականի փետրվարի 03-ին, անհատ ձեռնարկատեր Լևոն Սիմոնյանին ներկայացվել է ֆինանսական միջոցների առկայության մասին համաձայնագիրը և առաջարկվել է տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում վավերացնել այն, սակայն անհատ ձեռնարկատեր Լևոն Սիմոնյանը սույն թվականի փետրվարի 09-ին գրավոր հրաժարվել է Պայմանագրով ստանձնված պարտավորությունները կատարելուց:

Հիմք ընդունելով Պայմանագրի 8.13 կետը՝ Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ձանգակ» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը 2023 թվականի փետրվարի 13-ին միակողմանի լրիվ լուծում է Պայմանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհատ ձեռնարկատեր Լևոն Սիմոնյանը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում՝ մինչև սույն թվականի փետրվարի 18-ը ներառյալ, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Ձանգակ» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունում բացված 16028003757500 հաշվի համարին վճարել որակավորման ապահովման՝ 54255 (հիսունչորս հազար երկու հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ, պայմանագրի կատարման ապահովման՝ 36170 (երեսունվեց հազար մեկ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ գումարները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումներով սահմանված գումարները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազորված մարմնին՝ անհատ ձեռնարկատեր Լևոն Սիմոնյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց սկսելու նպատակով:

Հարգանքով՝

ԶԱՆԳԱԿ>> ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՄԵՀՐԶՈՅԱՆ